

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Ետալիայի սպիտակ բարածուխ։ Քանի գնում է, քարածուխի մռայլ հանքանը եղը աւելի և աւելի խորանում են և աւելի յաճախ են պատահում դազից առաջացած պայթումներ, վյուածքներ, որոնք տասնեակ և հարիւրաւոր բանուորնեցին իրենց տակն են ծածկում։ Առացուած քարածուխի գինն էլ օր աւուր թանդանում է։ Անգլիայում արդէն երկիւզի ձայներ են լուսում, որոնք նախատեսում են, որ ամենամօտիկ ապագայում քարածուխի հանքերն իսպառ կվեցջանան։ Խնչանել, ինչով փոխարինել քարածուխը։

Տեխնիկան վազուց արգէն այս հարցեցին պատասխանել է. ու քարածուխը և առհասորակ վառելիքի միւս տեսակները շատ դէպքերում հեշտութեամբ կարելի է փոխարինել «սպիտակ քարածուխով», այսինքն դետակների և ջրվէժների ջրի թափուելու ոյժով։ Այն երկրները, որոնք հարուստ են ոյզպիսի ջրի ոյժի ազբեւներով, շատապով սկսել են շահագործել, օգտուել նրանցից։ Ամերիկան, Նվեգիան, Նորվեգիան և Նիդիյարիան իրենց դորժարանների և արհեստանոցների մեջենաների համար պեհանջուելիք հարիւր—հազարաւոր ձիու ոյժը ստունում են ջրվէժներից։

Առևսասատնուում նոյնպէս շատ կան շահագործման ենթակայ գետեր և ջրվէժներ, բայց զբանք գեռ մնում են նախնական անազարտ գրութեան մէջ։ Խնչքան էլ տարօրինակ լինի, բայց և այնպէս իրողութիւն է, որ Գերմանիան էլ, որտեղ արդիւնագործութիւնը հսկայական շափերի է հասնում, այս ձիւզում յետ է մնացել երսպահական շատ տէրութիւններից, չնայելսկ որ հէնց գերմանական ֆիրմաներն են, որ շահագործում են սպիտակ քարածուխը օտար եկրներում։

Նատ խրատական է մանաւանդ Խոալիայի օրինակը, որտեղ վերջին ուարիներու շատ են օգտուում ջրի թափուելու ոյժից, որի պատճառով և ամենամօտիկ ապագայում ահազին յեղաշրջում առաջ կույզ այս երկրի արդիւնագործութեան մէջ։ Խոալիան քարածուխի հանքեր համարեա թէ չունի, երկրի մակերեսոյթն էլ լեռնոտ է, ուստի և նրա արդիւնագործութիւնը մինչեւ վերջին ժամանակներս շատ անշան էր, բայց այժմ, ջրի ոյժի շահագործման շնորհիւ, պէտք է շատ ծաղկեւ Խոալիայի լեռներում սկիզբն են առնում բաղմաթիւ փոքր և

մեծ լեռնային վտակներ և ջրվէժներ, միւս կողմից նկատելի է քարածուխի թանգութիւնը, ուստի և ձեռնարկողները սահպաւած են լինում ոյժի էլեքտրական հաղորդակցութիւն հաստատել, որի կառուցումը թէպէտ սկզբում շատ թանգ է նստում, բայց երկարատև շահագործման ընթացքում լիուլի օդապաւէտ է հանդիսանում:

Հանապարհորդները մօտիկ ապագայում կափսոսան, որ յաւիտեանս զրկուելու են հիւսիսային Խառլիայի ինքնուրոյն գեղեցիկ տեսարաններից: Գեղեցիկ և կուռական վայրերը հետդինետէ ոկսում են տեղի տալ կառուցուող հսկայական ոյժի կայարանների առաջ, որտեղ մարդուց սանձուած ջրի հոսանքները շարժողութեան են բերում մեծամեծ մեքենաներ, մեքենաները էլեկտրական հոսանք են մատակարարում դաշտավայրերի ընակիցներին՝ լուսաւորութեան ցանցով պատելով քաշաբները և շարժողութիւն հաղորդելով էլեկտրական գծերի կայարաններին և զործարանների մեքենաներին: Այս նոր ձեռնարկողները գրաւել են նաև հրաշալի Նադօ-Մաջերէ լճի շրջակայքը Հինաւորուց զգեակների աւելսակների կողքին բարձրանում են գործարաններ և կայարաններ, որոնց ուերերը բոլորովին հանգիստ են և ամենելին չեն նեղւում այն բանից, որ քարածուխը Խոալիայում երկու և կէս անգամ թանգ արժէ, քան Գերմանիայում, բանի որ առատութեամբ իրենց տրամադրութեան առկ ունին շրջակոյ վտակների ձրի «ուղիտակ քարածուխ»:

Դասական հնութեամբ յայտնի վայրերն այսուհետեւ անդառնալի կերպով կազմատուին և ճանապարհորդները անցած գարերի հնութիւնների փոխարէն կտեսնեն միապահազ հսկայական շինութիւններ կենդրոնական կայացանների համար: Ոինչև այժմ անօգուտ կորչող ոյժը հետզհետէ աւելի և աւելի մեծ քանակութեամբ վերածում է էլեքտրական հոսանքի ոյժի:

Տիբեր գետի վտակներն էլ արգէն ծածկուել են այսպիսի կայարաններով, Տերնի ջրվէժը 60,000 ձիւո ոյժ է մատակարարում, իսկ մի քանի ուրիշ վտակներից ամեն վայրկեան Հռոմ է հաղորդում 25,000 ձիւո ոյժ: Աղդա գետն էլ 200,000 ձիւո ոյժ է տալիս: Տերութիւն վտակից մօտ 170 վերսու երկարութեամբ ոյժ է գնում Հռոմ և Նէապոլ 80—88,000 վոլտ լարուածութեամբ:

Այս նոր ձեռնարկութիւնը ոչ միայն տնտեսապէս կբարձրացնի Խառլիան այլ և առողջապահական տեսակէտից մեծ և բարեցար ազգեցութիւնն կունենայ: Յայտի է, որ լեռնային վտակներից շատերը ամառը զրկուում են անընդհատ հոսելուց,

աեղ-տեղ հաւաքուելով լճանում են, որտեղ և աքագութեամբ մոծակներ են սկսում բազմանալ, իսկ յայտնի է, որ մուշարիա հիւանդութիւն տարածողները մոծակներն են։ Եթէ այս տեսուկ վտակները միանան աւելի մշտահոս վտակների հետ, այնպէս որ տարին տասներկու ամիս շարունակ հօսնն, գրանով արդէն վերջ կըսուի իտալական դոգոցին։

Մէր Կովկասն էլ հարուտ է բազմաթիւ լեռնային վտակներով, որոնք ձրի ոյժի անսպառ ազգիւր են հանգիսանում։ արդեօք կդայ ժամանակ և երը, որ մենք էլ կարողանանք օդուել ընութեան հարստութիւններից և մարդավարի անշարքաշ կեանք վարել։ Տեխնիկայի նուաճման համար մեր երկիրը գեռ հանգիսանում։ է իրեւ անազարդ կուսական մի վայր։

Ամենից աւելի ո՞ր ժողովուրդն է նետարերեւում գրականութեամբ։ Այս հարցում առաջնակարգ տեղը պատկանում է իուլանդացիներին։ Խոլանդիան 80,000 ընակիչ ունի, բայց այնտեղ լոյս տեսնող գրքերի թիւը, ընտկիցների թուի համեմատ, 25 անգամ աւելի է, քան արևմտեան նւրոպայի ամենատաշադիմ երիններում։ Աէդկանիկում լոյս են տեսնում 12 շաբաթաթերթ և 24 ձանդէս, որոնց կապոցները տեղափոխում են կղզու ամենահեռաւոր ծայրերը, այնպէս որ տեղ չի մնում, որ գրքեց, գրականութիւններից կտրուած լինի։

Խոլանդացիները ջերմ սիրահար են նաև թատրոնի թէպէտ միայն երկու աւաններում—Աէդկանիկում և Ակուրէյը թուում—կան յատուկ գերասանական խմբեր, բայց և այնպէս ըուլոր յայտնի գրամատիկական երկերը խաղում են այնտեղ, մանաւանդ գերամանականը։ Սովորաբար գիւղացիներից սիրողների խմբեր են կազմակերպւում, որոնց ներկայացումներին յաճախորդներն ամենայն ուշագրութեամբ հետեւում են։

Բնորու մի օրէնք։ Մէծ քաղաքների ընակիցները սովորութիւն են դարձրել ամառ—ձմեռ իրենց գործերը սկսել և վերջացնել միենոյն ժամին։ Ամառը արևի աւելի շուտ ծագելը բոլորովին չի ազդում նրանց կենցազավարութեան ընթացքի վրայ։ Պետական հիմնարկութիւններն էլ նոյնպէս առեանները բաց են անում և փակում մի անգամ արդէն որաշուած ժամերին։ Արա հետեանը լինում է այն, որ զուր տեղը վազ է վատնուում լուսաւորութեան վրայ, փոխանակ աւելի կանուն սկսելու և ցեցեկուայ լոյսով վերջացնելու գործերը, մենք թէ ամառը և ձմեռը սկսում ենք 9—11 ժամին և ի հարկէ ստիպուած ենք լինում շարունակել և աշխատել արհեստական լոյսի տակ։ Թւում է, թէ հեշտ կընէր խօսքը մէկ անել և ամառ-

Ները զործեցը 1—2 ժամ շուտ սկսել, բայց իրականացնելու համար շատ դժուարութիւններ են առաջ գալիս: Աւ ահա նախաձեռնութեան բացակայութեան շնորհիւ տէրութիւնները իւրաքանձիւր ամառ միլիոնաւոր ոսւբլիներ են ծախուժ արհեստական լուսաւորութեան վրայ, որ առողջութեան համար լինապակար է, մինչդեռ ամառնային առաւօտնելի ձրի և կենսաբար արեգակնային լոյսը ըոլորսվին անօդուած կորչում է:

Դործնական անդիտացիք վերջապէս ուշագրութիւն դարձրին այս բանի վրայ: Նբանք հասկացան, որ մեղք է արեգակնային լոյսի պէս բարիքը ձեռքից բաց թողնել և չօգտուել նրանից և մի հանճարեղ, թէպէտ ըստ էութեան շատ պարզ, եթիւ գտան այս դրութիւնից դուքս գալու համար: Այս նըանց ծրագիրը: Եթէ կաթիք էք զգում վաղը կանուխ վեր կենալ, թոյլ էք ապէս ձեզ մի անմեղ ինքնախարէտ թեան ենթարկուել՝ ձեր ժամացոյցը առաջ էք առնում: Այս հասուրակ միջոցը յաճախ աւելի գործնական է լինում, քան որ եէ մէկը: Անդլիացիք վճռեցին նոյնը անել. միայն աւելի հոկայական չափերով՝ ուղում են մի օրէնք հրատարակել տալ, որով ըոլոր պաշտօնական հիմնարկութիւնների ժամացոյցները միմի առմով առաջ պիտի տարուեն: Այս բանը կիրագործուի հետեւալ հերպով՝ ապրելի 1-ի գիշերուայ 2 ժամին ըոլոր պաշտօնական և հասարակական հիմնարկութիւնների ժամացոյցները միմի ժամով առաջ կամու առաջ կտարուեն, այսինքն՝ ուշագր կդրուի 3-ի վրայ: Հետևանքն այն կիրակի, որ քնակեշնեցին էլ կամայ-տկամայ մի ժամով առաջ վեր կկենան և առհասարակ ցերեկու այ ամբողջ կեանքը մի ժամով առաջ կընկնի և շուտ հիմնականայ: Իսկ հոկանմբերի 1-ի գիշերը ժամացոյցների ուղաքը յետ կտարուի և ցոյց կտայ իսկականը: Անդլիացիք արդէն հաշուել են, որ այսպիսի հասարակ եղանակով ամեն տարի 20,000,000 ռուբլուց աւելի կարելի է խնայել այն դումարից, որ յատկացուած է լուսաւորութեան համար: Էլ չենք խօսում այն ժամին, թէ որչափ բարեբար աղքեցութիւն կունենայ այս օրէնքը կենցաղավարութեան վրայ առողջապահական աեսակէտից:

Այս օրէնքը ամենայն հաւանականութեամբ կդործագրուի անդլիայում, որից յետոյ միւս երկիրներն էլ կհետեւն նրա օրինակին:

(Քաղաք „Պրիոր ու Լիոն“-ից):

Օ. Գ. Ռ.